ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Հոդված 26. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրամադրվող սոցիալական փաթեթը

1. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն (բացառությամբ Արտաքին հետախուզության ծառայության) զբաղեցնող անձանց և (կամ) նրանց ընտանիքի անմիջական անդամներին առողջապահության ծառայությունների, հիփոթեքային վարկի և պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկերի ամսական վճարի մարման, ուսման վճարի, Հայաստանի Հանրապետությունում և Ղարաբաղի Հանրապետությունում հանգստի ապահովման, մարզա-առողջարարական և սպորտային համալիրների, լողավազանների և այլ սպորտային կազմակերպությունների ծառայություններից օգտվելու միջոցով առողջ ապրելակերպի ձևավորման և ֆիզիկական կոփման նպատակով տրամադրվում է սոցիական փաթեթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն սահմանած կարգով և դեպքերում:

2. (մասը գործել է մինչև 2021 թվականի հոկտեմբերի 7-ը՝ 07.10.20 ՀՕ-447-Ն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն)

(26-րդ հոդվածը փոփ. 23.03.2018 ՀՕ-209-Ն, լրաց. 07.10.20 ՀՕ-447-Ն, փոփ., լրաց. 06.10.21 ՀՕ-340-Ն)

~~(26-րդ հոդվածի 1-ին մասը Արտաքին հետախուզության ծառայության պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց և (կամ) նրանց ընտանիքի անմիջական անդամների վրա տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից՝ համաձայն 23.12.2022 ՀՕ-604-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի)~~

3. Արտաքին հետախուզության ծառայության պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակներով (բացառությամբ առողջապահության ծառայությունների) օգտագործելու համար ՀՀ արտաքին հետախուզության ծառայության պետի հրամանով սահմանված կարգով տրամադրվում է պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց հատկացվող սոցիալական փաթեթին համարժեք գումարի չափով հատուցում: